

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ցանկացած պետության հիմնական առաքելությունն այնպիսի հիմնարար խնդիրների իրագործումն է, առանց որոնց հնարավոր չէ հասարակության նորմալ կենսագործունեությունն ու զարգացումը: Իհարկե, հասարակության զարգացմանը զուգընթաց պետության կողմից իրականացվող գործառնությունների շրջանակն ավելի է ընդլայնվում և այսօր բացի նվազագույն գործառնություններից (պաշտպանություն, օրինականության ապահովում, սեփականության իրավունքի պաշտպանություն, մակրոտնտեսական կառավարում, առողջապահություն) պետությունն իր վրա է վերցրել նաև շրջակա միջավայրի պահպանության, հակամենաշնորհային քաղաքականության, սպառողների իրավունքների պաշտպանության, գործազրկության ապահովագրման և բազմաթիվ այլ խնդիրների լուծման պատասխանատվությունը:

Դասական կապիտալիզմի ձևավորման սկզբնական շրջանում պետությունը բոլորովին չէր միջամտում տնտեսական գործընթացներին: Չեռնարկատիրական գործունեությանը պետության չմիջամտելու սկզբունքը տնտեսականորեն հիմնավորվել է անգլիական և ֆրանսիական տնտեսագիտական մտքի կողմից: Այդ ժամանակաշրջանի պատկերացմամբ պետությունը պետք է տնտեսության վրա ներգործեր միայն «բնական իրավունքի» սահմաններում, այն է՝ ապահովեր մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը և յուրացման մասնավոր քննությունը:

Դեռևս 18-րդ դարում Ադամ Սմիթը հիմնավորել է պետական միջամտության անհրաժեշտությունը մասնավոր ձեռնարկատիրության համար ոչ ձեռնտու, սակայն քաղաքացիների համար կարևոր տնտեսության տարրեր ճյուղերում:

19-րդ դարի վերջում և հատկապես 20-րդ դարի ընթացքում արևմտյան մի շարք պետություններ փոխեցին տնտեսության նկատմամբ իրենց մոտեցումները: 19-րդ դարի 80-ական թվականներին Գերմանիայի կանցլեր Բիսմարկն իրականացրեց պրոտեկցիոնիստական երկարգծերի պետականացում՝ երկաթուղային ընկերությունները սնանկացումից փրկելու համար, պետական եկամուտների ավելացման նպատակով ստեղծեց պետական ծխախոտային մենաշնորհ՝ հիմք դնելով տնտեսության պետական հատվածի կազմավորմանը:

Անգլիացի հայտնի տնտեսագետ Ջ.Մ.Քեյնսը «Ջրաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատության մեջ, հիմնավորելով տնտեսությունում պետության ծավալում և ակտիվ միջամտության անհրաժեշտությունը, առաջ է քաշել «համընդհանուր բարեկեցության պետության» տեսությունը, ինչը ենթադրում է պետական սեփականության նշանակալի ավելացում՝ ձեռնարկություններից և բնակչությունից գանձված հարկերի հաշվին: Այս ամենի արդյունքում ձևավորված պետական միջոցները պետք է ուղղվեն հանրային բարիքների արտադրությանը և սպառման ծավալների ավելացմանը, ինչպես նաև այլ համազգային կարիքների բավարարմանը:

Այս գաղափարները սկսեցին կյանքի կոչվել 20-րդ դարի երկրորդ կեսում, երբ ավելի ու ավելի մեծ թափ էր ստանում գիտատեխնիկական առաջընթացը և երբ գիտությունն աստիճանաբար վերածվում էր կարևորագույն նշանակություն ունեցող արտադրական գործոնի: Ստեղծված նոր իրողությունները պահանջում էին պետության կողմից երկրի գիտատեխնիկական ներուժի ավելացմանը նպատակաուղղված ներդրումների աճ: Բացի այդ, ԳՏԱ-ն հանգեցրեց աշխատանքի բաժանման էլ ավելի խորացմանը, արդյունքում՝ գնալով բարդացան տնտեսավարող սուբյեկտների միջև տնտեսական հարաբերությունները, որոնց կարգավորումը, ինչպես նաև նոր պայմաններում հասարակության բոլոր անդամների առավել բազմակողմանի զարգացումը և բարեկեցության ապահովումն առանց պետության միջամտության դարձան անհնարին:

Դեռևս անհիշելի ժամանակներից՝ առաջին պետությունների ստեղծումից սկսած, պետական սեփականությունն իր ուրույն տեղն է ունեցել ցանկացած երկրի տնտեսական համակարգում: Բացի հարկերից՝ պետական գանձարանի մուտքերն ապահովելու միջոց էին նաև հողերից, անտառներից, ընդերքի օգտագործումից և պետական սեփականության այլ օբյեկտներից ստացվող եկամուտները: Ամբողջությամբ պետական մենաշնորհներ էին նաև կամուրջների, ջրանցքների շինարարությունը, բանակի սպառազինությունն ապահովող արտադրությունները և այլն: Սակայն պետությունների զարգացմանը զուգընթաց սեփականության իրավահարաբերությունները ենթարկվում էին որոշ փոփոխությունների: Օրինակ՝ Չինաստանում 780 թ.-ին իրականացված բարեփոխումների արդյունքում գյուղատնտեսական հողերը դարձան առքուվաճառքի առարկա, սակայն պետությունը պահպանում էր վերահսկողության իր բացառիկ իրավունքը: Հետագայում՝ 846 թվականին, պետությունը բռնագրավեց 60 մլն հա հողատարածք, որը պատկանում էր բուրդայական եկեղեցուն, քանի որ հողի սեփականատերերը գտնում էին հարկերից խուսափելու տարբեր միջոցներ, իսկ դրանից տուժում էր պետական գանձարանը: Նույն բարեփոխման արդյունքում պետական մենաշնորհների վերածվեցին թեյի և օդու արտադրությունները, ինչպես նաև աղի արդյունահանումը: Վերջինս հատկապես կարևոր էր, քանի որ այն ապահովում էր պետական գանձարանի մուտքերի 50%-ը¹:

Ավելի ուշ՝ 18-րդ դարում, Պետրոս առաջինի կողմից Ռուսաստանում իրականացված բարեփոխումների արդյունքում իրավունք տրվեց ընդերքի հանածոներն օգտագործել այն անձանց, ովքեր առաջինը կհայտնա-

¹ Шу "История мировой экономики", под редакцией Г. Б. Поляка, А. Н. Марковой, Москва, 2001, էջ 302:

բերելին այդ համբերը: Մյուս կողմից, պետական ձեռնարկությունները կառավարման հանձնվեցին առավել խելացի, ազնիվ և հարուստ ձեռներեց անձանց:

Այսօր ևս տնտեսական գործունեության այն ոլորտները, որոնք այս կամ այն պատճառներով (մասնավոր կապիտալի պակասի, շուկայի անընդունակության կամ դրա բացակայության, ինչպես նաև սոցիալական) ստիպված է իր վրա վերցնել պետությունը, միանշանակ, անփոփոխ կամ քարացած չեն: Մասնավոր կապիտալի ամրապնդման, շուկայական մեխանիզմների կայունացման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման հետ, տնտեսական գործունեության շատ բնագավառներ, որոնք նախապես ընդգրկված էին պետական ձեռնարկատիրության շրջանակներում, ավելի ու ավելի մեծ չափով անցնում են շուկայական մեխանիզմների կարգավորման ոլորտ: Մյուս կողմից, պետական սեփականությունն ունի իր առավելությունները և այն երկրներում, որտեղ պետական հատվածը մեծ է, վերջինս ծառայում է որպես տնտեսական պարբերաշրջանների (ցիկլերի) մեղմացման գործիք: Տնտեսական ճգնաժամների պայմաններում, երբ մասնավոր ներդրումները կրճատվում են, պետական հատվածը գործում է այլ կերպ. նորացվում է պետական երկաթգծերի, փոստային, հեռախոսակապի ծառայությունների հիմնական կապիտալը, ներդրումներ են կատարվում ավտոճանապարհների շինարարության, օդանավակայանների, նավահանգիստների, էլեկտրակայանների և այլ ենթակառուցվածքային օբյեկտների վերակառուցման նպատակով, ինչը թույլ է տալիս հակազդել արտադրության ծավալների անկմանն ու գործազրկության աճին:

Ասվածի ապացույցն է այն, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ մասնավոր հատվածի ձեռնարկությունները ենթարկվեցին զանգվածային սնանկացման, նույն երևույթը չկրկնվեց և ոչ մի պետական ընկերությունում: Ավելին, 20-րդ դարի երկրորդ կեսում Արևմտյան Եվրոպայի երկու խոշորագույն կառույցների՝ Լա-Մանշը հատող թունելի և Հռենոս-Մայն-Դանուբ ջրանցքի շինարարություններն իրականացվել են Ֆրանսիայում և Գերմանիայում անախադեպ ցածր տնտեսական աճի տարիներին²:

Տնտեսական ճգնաժամի պայմաններում շինարարության մեջ կատարվող ներդրումները կարևոր են այնքանով, որ վերջինս մուլտիպլիկատորի դեր է կատարում՝ հանդիսանալով շինանյութերի, տրանսպորտային միջոցների, մեքենա-սարքավորումների և այլնի պատվիրատու: Բացի այդ, շինարարությունը տնտեսության ամենաաշխատատար ճյուղերից է և չի պահանջում բարձր որակավորված աշխատուժ, ուստի այն նպաստում է գործազրկության կրճատմանը:

Պետական ձեռնարկատիրությունը, որը դիտարկվում է և՛ որպես այլընտրանք մասնավորին, և՛ որպես տնտեսության կարգավորման գործիք, անմիջականորեն կամ անուղղակի ձևով ենթադրում է եթե ոչ լրիվ շահույթի բացառում, ապա մասնակի հեռացում այն սկզբունքից, ըստ որի տնտեսական գործունեության իրականացման նպատակը շահույթ ստանալն է: Բացառապես շահույթ ստանալու կողմնորոշումը կջնջեր պետական և մասնավոր ձեռնարկատիրության միջև եղած տարբերությունը, ավելին, անհնար կդարձներ կարգավորման խնդիրների իրականացումը: Վերը ասվածն ամենևին էլ չի նշանակում, որ պետական ձեռնարկություններն ընդհանրապես չպետք է իրենց առջև շահույթ ստանալու խնդիր դնեն:

Պետական ձեռնարկությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանց սեփականատերերն, ի տարբերություն մասնավոր ձեռնարկությունների, շատ դեպքերում շահագրգռված չեն շահույթի ստացմամբ: Առանց շահույթ ստանալու աշխատելը պայմանավորված է ոչ միայն կառավարության դիրքորոշմամբ, այլ նաև սպառողների գործոնով: Վերջիններս սպասում են, որ պետական ձեռնարկությունները «զսպվածություն» կցուցաբերեն շահույթի ստացման հարցում: Զգալի շահույթների ստացումը պետական ձեռնարկությունների կողմից հաճախ դիտվում է որպես սպառողի գրպան մտնել:

Այսօր ևս առկա է պետական և մասնավոր սեփականությունների օպտիմալ հարաբերակցության խնդիրը, քանի որ այն երբեք վերջնական համարել չի կարելի և այդ հարաբերակցությունը կարող է փոփոխվել՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ զուգակցել տնտեսավարման այդ երկու ձևերի առավելությունները: Այս դեպքում տեղի է ունենում տնտեսության մի ոլորտի թափանցում մյուսի մեջ, նրանց միահյուսում: Այդ պատճառով էլ արտասահմանյան պրակտիկայում ապապետականացումը մաքուր տեսքով հանդիպում է շատ հազվադեպ, հիմնականում ստեղծվում են խառը ձեռնարկություններ, որոնք կոչված են վերացնելու սեփականության յուրաքանչյուր ձևին բնորոշ թերությունները և իրացնել մյուսի առավելությունները: Օրինակ, Եվրոպայի ավտոմեքենաներ թողարկող խոշորագույն կոնցեռն «Ֆոլկսվագենի» բաժնետոմսերը պատկանում են Գերմանիայի կառավարությանը, Հարավային Սաքսոնիա երկրամասի կառավարությանը և բազմաթիվ անհատ բաժնետերերի³:

Պետությունն, ի տարբերություն այլ սեփականատերերի, չի կարող իր սեփականության տակ գտնվող օբյեկտների կառավարման հիմնահարցերը լուծել՝ կիրառելով փորձի և սխալների մեթոդը, քանի որ պետական սեփականության կառավարման արդյունքներն իրենց ազդեցությունն են թողնում հասարակության բավականին մեծ մասի վրա՝ ապահովելով նրա կենսամակարդակը, սոցիալական պաշտպանվածությունը, առողջության պահպանումը, մտավոր զարգացումը, և այլ հանրորեն ընդունված մարդկային արժեքներից օգտվելու հնարավորությունը: Ուստի, չկրկնելու համար այլ երկրների սխալներն, անհրաժեշտ է ուսումնասիրել վերջիններիս փորձը:

Միջազգային պրակտիկայում ընդունված է պետական հատվածի օպտիմալ ծավալի որոշման երկու հիմնական մեթոդ: Առաջին դեպքում հստակեցվում է սոցիալական գործառույթների այն շրջանակը, որոնց կատարումը պետական ընկերությունները պետք է վերցնեն իրենց վրա, ընդ որում, առանց վերջիններիս նկատմամբ

¹ «История мировой экономики», под редакцией Г. Б. Поляка, А. Н. Марковой, Москва, 2001, էջ 374:

² «Управление государственной собственностью», под ред. В.И. Кошкина, В.М. Шупыро, Москва, 1997 г. էջ 53:

³ «Управление государственной собственностью», под ред. В.И. Кошкина, В.М. Шупыро, Москва, 1997 г., էջ 49:

քանակական սահմանափակումների կիրառման: Իսկ երկրորդ դեպքում, ընդհակառակը, հստակորեն սահմանափակվում է պետական ձեռնարկությունների քանակը՝ անկախ դրանց գործունեության տեսակից:

Կարելի է պնդել, որ ներկայացված տարբերակներից առաջինն ավելի ճկուն և արդյունավետ է, ուստի պատահական չէ, որ համաշխարհային պրակտիկայում այն առավել լայն տարածում է ստացել: Այսպես, նշված մեխանիզմն օգտագործվում է եվրոպական երկրների մեծ մասում: Այստեղ պետական ձեռնարկությունների հատվածը կազմավորվել է ելնելով կամ, այսպես կոչված, «հանրային օգտակարության» սկզբունքից, կամ էլ՝ պետության կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության գերակայություններից:

Արևմտյան Եվրոպայի երկրներում հանրային օգտակարության ոլորտին են դասվում հասարակության համար կենսականորեն անհրաժեշտ այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են էլեկտրա, ջերմա և ջրամատակարարումը, տրանսպորտն ու կապը: Եվրոպական Միության բոլոր երկրներում էլ այս ոլորտի ձեռնարկությունների հիմնական մասը մտնում է պետական հատվածի կառուցվածքի մեջ¹: Բնականաբար, բվարկված ծառայությունները կարող են մատուցվել մաև մասնավոր ընկերությունների կողմից՝ վերջիններիս որոշակի արտոնությունների տրամադրման և դրանց գործունեության նկատմամբ պետական հսկողության առկայության պարագայում: Այդուհանդերձ, ԵՄ երկրների իշխանությունները վստահ են, որ որոշ կենսականորեն անհրաժեշտ գործառնությունների իրագործումն ավելի նպատակահարմար է վստահել պետական ձեռնարկություններին, քան մասնավոր հատվածին՝ մույնիսկ վերջիններիս գործունեության պետական կարգավորման պայմաններում: Արևմտյան որոշ երկրներում այս սկզբունքը մույնիսկ ամրագրված է սահմանադրորեն (ԱՄՆ-ում փոստային ծառայությունները², Գերմանիայում՝ փոստային ծառայությունները և երկաթուղին):

Արևելյան Եվրոպայի երկրներում ևս աստիճանաբար հստակեցվում են այն ոլորտները, որտեղ հնարավոր է պետական ձեռնարկությունների մասնակցությունը: Օրինակ, Լեհաստանում կառավարության կողմից նախատեսվում է պետական ձեռնարկությունների գործունեությունը սահմանափակել միայն տնտեսական ենթակառուցվածքներով, այն է՝ ծովային և գետային նավահանգիստներ, օդանավակայաններ, երկաթգծեր, էլեկտրա-ցանցեր, մայրուղային հեռահաղորդակցության ցանցեր, ռազմավարական պաշարների պահեստներ և այլն: Բացի այդ, Լեհական պետական ձեռնարկությունները կարող են ծառայություններ մատուցել մաև գիտական գործունեության, հիմնարար կրթության, փոստային կապի բնագավառներում:

Ներկայումս ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների շատ տնտեսագետներ, հենվելով վերջին տարիների պետական սեփականության կառավարման համաշխարհային փորձի վրա, գտնում են, որ պետությունն իր ձեռքում պետք է կենտրոնացնի ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում գործող ընկերությունների բաժնետոմսերի այնպիսի մասնաբաժիններ (սովորաբար՝ կանոնադրական կապիտալի 25-30%-ից ոչ պակաս), որոնք մի կողմից պետությանը հնարավորություն կտան արդյունավետ մասնակցություն ունենալ դրանց կառավարմանը, մյուս կողմից՝ եապես չեն սահմանափակի մասնավոր ներդրողների իրավունքները³:

Այսպիսով, կարելի է ասել, որ հիմնականում պետական հատվածի չափերը համարվում են օպտիմալ ոչ թե վերջինիս տնտեսական արդյունավետության աստիճանից ելնելով, այլ՝ հաշվի առնելով հանրության համար օգտակար գործառնությունների իրագործման արդյունավետությունը:

Սրա հետ միասին, չի կարելի չնշել, որ մի շարք եվրոպական երկրներում հասարակության համար կենսական ոլորտներում պետական մասնակցությունից հրաժարվելու կամ այն նվազագույնի հասցնելու որոշակի միտումներ են նկատվում: Այսպես, որոշ երկրներ որդեգրել են նմանատիպ պետական ընկերությունների մասնավորեցման քաղաքականություն, ինչը ենթադրում է վերջիններիս վաճառք՝ դրանց գործունեության կարգավորման կոչտ սկզբունքների կիրառմամբ:

Նկարագրված սկզբունքի իրագործման բնորոշ օրինակը գործում է Սեծ Բրիտանիայում, որտեղ վերջին տասնհինգ տարիների ընթացքում համալիր միջոցառումներ են իրականացվում հեռահաղորդակցության, էներգետիկայի և երկաթուղային տրանսպորտի ոլորտներում գործող ընկերությունների մասնավորեցման ուղղությամբ⁴:

Մյուս կողմից, քանի որ նման ձեռնարկությունների մասնավորեցումը միաժամանակ ուղեկցվում է դրանց գործունեության կարգավորմանն ուղղված նշանակալի թվով սահմանափակումների կիրառմամբ, ուստի դրա արդյունքները հաճախ դառնում են խիստ բացասական: Օրինակ, երբ Սեծ Բրիտանիայում բոլոր երկաթուղիները մասնավորեցվեցին Railtrack մասնավոր ընկերության կողմից, մի քանի տարի անց չափազանց խիստ պետական կարգավորման, ընկերության սեփականատերերի իրավունքների չափից ավելի սահմանափակման պատճառով այն սնանկացավ: Ներկայումս այս երկրի բոլոր երկաթուղային ենթակառուցվածքները փոխանցվել են Network Rail պետական ընկերությանը, որի վնասներն, ի դեպ, նշանակալիորեն գերազանցում են Railtrack ընկերության վնասները⁵: Այստեղից կարելի է հետևություն անել, որ եթե մասնավորեցվող ընկերությունում սահմանվում է չափից ավելի խիստ պետական կարգավորում, այդ մասնավորեցումը դառնում է անարդյունավետ:

Ներկայումս շատ երկրներում տարածված է «տսկե» բաժնետոմսի միջոցով մասնավոր ընկերությունների նկատմամբ հսկողություն սահմանելու մեթոդը: Վերջինս սեփականատիրոջը (տվյալ դեպքում՝ պետությանը) իրավունք է տալիս նրա բացառիկ իրավասությունների մեջ մտնող հարցերի վերաբերյալ բաժնետերերի ժողովի կողմից որոշում ընդունելու դեպքում դնելու վետո: Ըստ էության, «տսկե» բաժնետոմսերի տերերի իրավունքները հիմնականում հանգում են ԲԸ կազմակերպական բնույթի վերակազմավորումների և ԲԸ գույքային բազային

¹ Stb՝ www.mst.gov.pl/documenty/Ocena02-ang.pdf

² Стиглиц Дж. «Экономика государственного сектора» М.: Изд-во МГУ, 1997, էջ 175:

³ Աղբյուրը՝ www.mst.gov.pl/documenty/Ocena02-ang.pdf

⁴ Stb՝ www.prompolit.ru/96445

⁵ Stb՝ www.prompolit.ru/96445

անմիջականորեն առնչվող խոշոր գործարքների կնքման նկատմամբ հսկողության սահմանումը: Մնացած բոլոր դեպքերում բաժնետերերի ժողովն ունի այնպիսի իրավունքներ, ինչպիսիք ունեն այն ԲԸ-ները, որոնցում չկան «ոսկե» բաժնետոմսեր: Իսկ ինչու՞ է անհրաժեշտ ունենալ «ոսկե» բաժնետոմս, եթե բաժնետոմսերի հսկիչ ծրարը պետությանն օժտում է ԲԸ գործունեության վրա ավելի մեծ չափով ազդելու իրավասությամբ: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ կիրառելով «ոսկե» բաժնետոմսը, պետությունը միաժամանակ լուծում է ապապետականացվող գույքի արժեքից պետական բյուջե մուտքեր ապահովելու խնդիրը: Դրանով հնարավորություն է ստեղծվում պետության կողմից պահպանելու ընկերության կառավարման լծակները և մասնավոր ներդրողներին վաճառել գործնականում բոլոր բաժնետոմսերը (բացառությամբ մեկի՝ «ոսկե» բաժնետոմսի, որի գործողության ժամկետը լրանալուց հետո (եթե այդպիսի ժամկետ սահմանվում է) օտարման ցանկացած եղանակի դեպքում կփոխարկվի սովորական բաժնետոմսի): Այսպիսով, «ոսկե» բաժնետոմսի և բաժնետոմսերի հսկիչ ծրարի պահպանումը պետության կողմից չեն հանգեցնում ԲԸ-ների տնտեսական ինքնուրույնության կտրուկ սահմանափակումների, և միևնույն ժամանակ պետական կառույցների կողմից պահպանվում են ԲԸ-ների վերականգնվողությունների նկատմամբ արտատնտեսական ազդեցության հնարավորությունները:

Այսպիսով, ցանկացած երկրի համար ռազմավարական համարվող ոլորտներում գործող ընկերությունների նկատմամբ սեփականության իրավունքը նպատակահարմար է տրամադրել պետությանը: Իհարկե, վերջիններիս կառավարման արդյունավետությունը բարձրացնելու կամ նոր կապիտալ ներգրավելու նպատակով ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունների բաժնետոմսերը կարելի է վաճառել մինչև այն չափը, որը թույլ կտա պետությանը պահպանել վերահսկման իր իրավունքը: Այս դեպքում մասնավորեցումը կարող է իրականացվել մաս «ոսկե» բաժնետոմսի միջոցով, ինչը կերաշխավորի մասնավորեցվող ընկերության կողմից պետության շահերին չհակասող գործունեության իրականացում՝ միաժամանակ ապահովելով տնտեսական արդյունավետության բարձր մակարդակ:

Ինչ վերաբերում է շահույթի նպատակ հետապնդող ընկերություններին, ապա կարծում ենք, որ դրանք ամբողջովին պետք է գործեն մասնավոր սեփականության պայմաններում: Պետության ուղղակի միջամտությունն այս դեպքում միայն կարող է բացասաբար ազդել վերջիններիս գործունեության վրա: Այնուամենայնիվ, եթե ընկերության հիմնական նպատակը շահույթի ստացումն է, սակայն այն ծառայում է պետության յուրահատուկ շահերին (օրինակ, եթե ընկերությունը ծառայում է որպես երկրի արտաքին քաղաքականության գործիք), կարծում ենք, որ այդ տիպի ընկերությունների պետական լինելն արդարացված է, քանի որ, վերջին հաշվով, դրանք ծառայում են տվյալ պետության քաղաքացիների շահերին:

ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԼԻԳԻՏԻՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Շատ երկրներում, ուր իրականացվում են լիզինգային գործառնություններ, ստեղծված են ներդրումային գործունեության, մասնավորապես լիզինգային գործունեության կառավարման մորմատիվ-իրավական և մեթոդական բազաներ, ինչպես մասնավորապես պայմաններ մակրոտնտեսական մակարդակում:

Գործընկերների հետ հարաբերություններում իրավական դաշտի անորոշությունը, երբեմն էլ իրավաբանորեն ոչ պաշտպանված լինելը, լիզինգային գործարքների կնքման ժամանակ մեծացնում են ռիսկի գործոնը և խոչընդոտում ձեռնարկատիրական գործունեությունը: Հատկանշական է, որ որոշ երկրներում լիզինգի մասին հատուկ օրենսդրության և լիզինգային գործարքների ծավալի միջև կա անհամապատասխանություն:

Այսպես, օրինակ, Գերմանիայում չկա հատուկ օրենք լիզինգի մասին, սակայն երկիրը հանդիսանում է լիզինգային գործարքների ծավալով առաջինը եվրոպական մասշտաբով: Իսկ Ֆրանսիան և Իտալիան, որ ունեն օրենքներ լիզինգի մասին, ցուցաբերում են լիզինգային գործարքների առավել համեստ ցուցանիշներ: Այլ խոսքով, լիզինգային հարաբերությունների կարգավորումը պետության կողմից յուրաքանչյուր երկրում ունի իր առանձնահատկությունները:

Ունեցվածքը ժամանակավոր օգտագործման և տնօրինման հանձնելու մասին մորմատիվ-իրավական դաշտի կարգավորման խնդրի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել լիզինգային հարաբերությունների մի քանի մակարդակ, որոնց համապատասխան էլ երկրները կարելի է բաժանել երեք խմբի.¹

- երկրներ, որոնցում ձևավորվող իրավական ակտերը կոչված են կանոնակարգելու լիզինգային գործունեության առանձին հարաբերություններ (Գերմանիա, ԱՄՆ, Նիդեռլանդներ, Դանիա),
- երկրներ, որտեղ հատուկ օրենսդրությամբ կարգավորվում է սոսկ լիզինգի պայմանագրի կողմերի միջև հարաբերությունները (Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա),
- երկրներ, որոնցում գործում են լիզինգային գործարքները՝ որպես հարաբերությունների եռակողմ համակարգը կարգավորող հատուկ օրենքներ (Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Պորտուգալիա, Բելգիա, Շվեդիա, Հարավային Կորեա, Ռուսաստան):

Առաջին խմբին պատկանող երկրներում օրենսդրությունը ուշադրությունը կենտրոնացնում է լիզինգային գործունեության ֆինանսական և հարկային կողմերի վրա: Օրինակ, 1982 թվականին ԱՄՆ-ում ընդունվեց

¹ Кабатова Е. В., Лизинг: Правовое регулирование, практика, Москва, 1991.